




ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նվիրվում է Հ. Ավետիսյանի  
ծննդյան 90-ամյակին

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԵՑ՝ Պ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ  
Լ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ ԱՇԿԵԱՆ  
ՄԱՏԵՆԱՇԱՐ  
170



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
170

ԵՐԵՎԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
2017

ՀՏԴ 01:94(479.25)

ԳՄԴ 91.9:63.3(52)

Հ 945

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

**Պատասխանատու խմբագիր՝ ակադեմիկոս  
Ա.Ա. Մելքոնյան**

**Հրանտ Ավետիսյան**

Հ 945 Հրանտ Ավետիսյան. կենսամատենագիտություն/Կազմ.՝ Լ. Հովհաննիսյան. – Եր.: Պատմության ինստիտուտ, 2017. – 119 էջ:

Սույն կենսամատենագիտության մեջ ներկայացված են հայ անվանի պատմաբան, ակադեմիկոս Հրանտ Ալեքսանի Ավետիսյանի կյանքը և գիտական, գիտակազմակերպչական ու մանկավարժական գործունեությունը: Կարևորված է նրա մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին: Թվարկված են Հ. Ավետիսյանի կյանքի և գործունեության վերաբերյալ հրապարակումներ ու նյութեր:

Ուսումնասիրության մատենագիտական հատվածում ժամանակագրական հաջորդականությամբ և, ըստ իրենց բնույթի, թվարկված են Հ. Ավետիսյանի աշխատությունները՝ նրա մենագրությունների վերաբերյալ գրախոսություններով հանդերձ, ինչպես նաև՝ Հ. Ավետիսյանի խմբագրությամբ լույս տեսած գիտամեթոդական աշխատանքները:

Կենսամատենագիտությունն ամբողջացնում են Հ. Ավետիսյանին նվիրված գեղարվեստական տեղեկագրությունները և նրա կյանքի, գործունեության տարբեր ժամանակահատվածներն ու ուղղությունները ներկայացնող արխիվային ուշագրավ լուսանկարները:

ՀՏԴ 01:94(479.25)

ԳՄԴ 91.9:63.3(52)

ISBN 978-9939-860-59-6

© ՀՀ ԳԱՍ պատմության ինստիտուտ, 2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ .....	5
ԽՈՍՔ ՀԻՇՄԱՍԿԻ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ .....	7
ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ. ԱԿՆԱՐԿ ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	9
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	36
Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ ՆՍՏԱՇՐՁԱՆՆԵՐԻՆ ՈՒ ԿՈՆՏԵՐԱՆՍԵՐԻՆ .....	41
Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ .....	46
Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ .....	49
Ա) ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՍԱԳՐՔԵՐ ՈՒ ՁԵՆՆԱՐԿՆԵՐ .....	49
Բ) ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ ՈՒ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ .....	60
Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	94
ԱՐԽԻՎԱՅԻՆ ԼՈՒՄԱՆԿԱՐՆԵՐ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	102
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ .....	113

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ալեքսանի Ավետիսյանը (1927 – 2004) հայաստանյան և արտասահմանյան գիտական շրջանակներում հայտնի է ոչ միայն որպես ականավոր պատմաբան, այլև՝ գիտության հմուտ կազմակերպիչ, Մարդ և Քաղաքացի: Նա ապրել է աշխատանքային ու ստեղծագործական լիարյուն կյանք: Դրան հետադարձ հայացք ձգելիս ընդգծվում են Հ. Ավետիսյան մարդու և մտավորականի կերպարը միաձուլող ու բնութագրող հատկանիշները՝ մարդասիրություն, հայրենասիրություն և աշխատասիրություն, որոնք անփոփոխ մնացին նրա ապրած հարափոփոխ ժամանակի ելևէջներում:

Սույն կենսամատենագիտությունն արտացոլում է անվանի պատմաբանի անցած կեսդարյա ստեղծագործական ուղին: Աշխատությունը հարգանքի համեստ տուրք է Հ. Ավետիսյանի հիշատակին և հրատարակվում է նրա ծննդյան 90-ամյա հոբելյանի առթիվ:

Կենսամատենագիտությունն ընդգրկում է 1927 – 2017 թթ. ընկած ժամանակահատվածը՝ Հ. Ավետիսյանի ծննդից մինչև նրա հիշատակը հավերժացնող հուշաքարի բացումը: Նրանում ներկայացված են Հ. Ավետիսյանի կյանքը, գիտական, գիտակազմակերպչական և մանկավարժական գործունեությունը: Աղյուսակի միջոցով նաև ներկայացված է անվանի պատմաբանի մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին: Թվարկված են Հ. Ավետիսյանի կյանքի և գործունեության վերաբերյալ մի շարք հրապարակումներ ու կյուրթեր:

Ուսումնասիրության մատենագիտական հատվածում ժամանակագրական հաջորդականությամբ և, ըստ իրենց բնույթի, թվարկված են Հ. Ավետիսյանի աշխատությունները՝ նրա մենագ-

րությունների վերաբերյալ գրախոսություններով հանդերձ, ինչպես նաև՝ Հ. Ավետիսյանի խմբագրությամբ լույս տեսած գիտամեթոդական աշխատանքները:

Կենսամատենագիտությունն ամբողջացնում են Հ. Ավետիսյանին նվիրված գեղարվեստական ստեղծագործությունները և նրա կյանքի, գործունեության տարբեր ժամանակահատվածներն ու ուղղությունները ներկայացնող արխիվային ուշագրավ լուսանկարները:

Վերջում տրված է անձնանունների ցանկ, որը դյուրացնում է անհրաժեշտ կյուբի փնտրումը: Ցանկում անձնանունները թվարկված են ըստ լեզուների և այբբենական հաջորդականությամբ: Դրանց դիմաց դրված են աշխատությունների միասնական համարակալման թվերը: Գործիչների մասին աշխատությունների համարները վերցված են փակագծերի մեջ:

Հ. Ավետիսյանի Հունգարիայում կարդացած գեկուցումների վերաբերյալ տվյալները հստակեցնելու հարցում աջակցել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նախկին աշխատակից հունգարուհի Պ. Ջոթյան-Կրայչիրը և նույն ինստիտուտի գիտաշխատող Հ. Խուդանյանը: Իր մասնագիտական խորհուրդներով կենսամատենագիտության կազմմանը նաև աջակցել է ՀՀ ազգային գրադարանի մատենագետ Ռ. Թումայանը:

## ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱՍԿԻ ԵՎ ԵՐԱՄՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Հրանտ Ավետիսյանին նվիրված կենսամատենագիտության մեջ եղբայրս ներկայացված է ոչ միայն որպես պատմաբան, այլև որպես Մարդ: Հ. Ավետիսյանը չէր կարող չլինել այդպիսին, որովհետև ծնվել ու մեծացել էր մի ընտանիքում, որտեղ գերիշխում էին կարոտը և սերը Հայրենիքի նկատմամբ, որտեղ միշտ սովորեցրել են լինել ազնիվ, հայրենասեր, բարի, սիրել յուրայինին, հարգել մարդու արժանապատվությունը:

Հրանտն ինձ համար բարության ու մարդասիրության չափանիշ էր: Նա սիրող և հարգող զավակ էր իր ծնողների համար, քույրերի, կնոջ, երեխաների ու թոռների համար: Նա հոգատար էր նաև իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ: Ես ականատես եմ եղել, թե նա ինչ մեծ բավականություն էր ստանում, երբ օգնում էր որևէ մեկին:

Նա ապահովում էր փոխադարձ հարգանք և ընտանիքում, և՛ աշխատավայրում, դրա հետ մեկտեղ ստեղծում էր համախմբված ու բնականոն մթնոլորտ:

Հ. Ավետիսյանի գիտական աշխատանքները նվիրված են հայոց նորագույն պատմության բազմաշերտ խնդիրներին: Դրանցում ակնհայտ է այն դիրքորոշումը, որ պատմությունը չի կարելի բաժանել «սիրելի» և «ոչ սիրելի» ժամանակաշրջանների, այն պետք է վերլուծել ու ներկայացնել ըստ պատշաճի, անկողմնակալ կերպով, գնահատել գիտնականի քրտնաջան աշխատանքն ու դրա արդյունքները: Գրագետ, մանրակրկիտ և հետևողական կերպով այդպիսի աշխատանք կատարել է պ.գ.թ., դոցենտ Լիլիթ Հովհաննիսյանը՝ վերլուծելով Հ. Ավետիսյանի կյանքն ու գործունեությունը, տարբեր ժամանակաշրջանների գիտական աշխատությունները և կազմելով նրա կենսամատենագիտությունը: Լ.

Հովհաննիսյանի մեջ տեսնում ես և՛ լուրջ, կայացած գիտնականի, և՛ իր ուսուցչի նկատմամբ սեր ու խոր հարգանք տաժող ազնիվ մարդու:

Պատմաբանի նպատակն է՝ արխիվային վավերագրերի միջոցով մոռացումից փրկել, հասարակությանը ներկայացնել և լուսաբանել մեր ազգային պատմության բազմաթիվ, այդ թվում և կնճռոտ հիմնահարցերը: Պետք չէ մոռանալ ազգասեր և հայրենասեր ոչ մի գիտնականի, վերհանել, ուսումնասիրել նրանց թողած գիտական ժառանգությունը: Այդ առաքելությունն իրականացնողներն իրավամբ արժանի են դրվատանքի: Դա է ժամանակի պահանջը, որովհետև գիտնականը միշտ մնում է գիտնական՝ անկախ ժամանակաշրջանից:

Ուստի, շնորհակալություն եմ հայտնում նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրինությանը՝ նման մնայուն և օգտակար աշխատություն հրատարակելու համար:

**Հրանտ Ավետիսյանի քույր**  
**Զուբեյդա Ավետիսյան**  
**30.11.2017 թ.**

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ. ԱԿՆԱՐԿ ԿՅԱՆՔԻ,  
ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հրանտ Ավետիսյանը ծնվել է 1927 թ. մարտի 10-ին, Մեծ Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) քաղաքում, Կարսի մարզի Բաջյուղ բնակավայրից բռնագաղթած Ալեքսան և Լուսիկ Ավետիսյանների բազմանդամ ընտանիքում: Հայրը զբաղվել է գյուղատնտեսությամբ, ապա՝ սևագործ բանվորությամբ, իսկ 1924 թվականից ծառայության է անցել Կիրովական (նախկինում՝ Մեծ Ղարաքիլիսա) քաղաքի շրջանային սպառողական միությունում՝ որպես պահեստի վարիչ: Հայրենի եզերքում՝ Կարսում տուն ու տեղ թողած և մագապուրծ գաղթի ճանապարհը բռնած ծնողների զավակ լինելու, ինչպես նաև միակ եղբոր՝ տասնութամյա Սուրենի՝ Կարմիր բանակին կամավոր զինվորագրվելու և Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատներում անձնվիրաբար մարտնչելու հանգամանքները որոշիչ էին նրա համար մասնագիտություն ընտրելու գործում<sup>1</sup>: Իր հետ հարցազրույցներից մե-

<sup>1</sup> Սուրեն Ավետիսյանը 1941 թ. նոյեմբերի 14-ին կամավոր զինվորագրվել է Կարմիր բանակին: Սովորել է ռազմաօդային ուժերի դեսանտային դպրոցում: Այնուհետև, որպես № 1204 հրետանային գնդի հետախույզ-դիտորդ, եֆրեյտոր Ս. Ավետիսյանը մարտնչել է Հարավ-արևմտյան, Ստալինգրադյան և Արևմտյան, ամեն Բելոռուսական ռազմաճակատներում: Զինվորական պարտականությունները բարեխղճորեն կատարելու, մարտական ընկերների համար ոգևորիչ օրինակ ծնալու, կազմակերպչական հմտություններ դրսևորելու, Ստալինգրադի ճակատամարտում ցուցաբերած տոկոսություն ու անձնվիրության համար արժանացել է բարձր պարգևների. Լեռնի պարգևատրվել է «Արիության համար» մեդալով (23.02.1942 թ., 28.11.1942 թ., 15.07.1944 թ.) և կրկնակի «Կարմիր սատր» շքանշանով (06.10.1943 թ., 15.04.1945 թ. այդեն հետմահու), նաև պարգևատրվել է «Ստալինգրադի պաշտպանության համար» (13.07.1943 թ.) ու «Մարտական ծառայությունների համար» մեդալներով: 1945 թ. փետրվարի 20-ին հարազատներին գրած

կում Ն. Ավետիսյանն այդ առիթով նշել է հետևյալը. «Երեխա ժամանակ ծնողներիցս անընդհատ լսում էի էրզրի մասին, վերապրում նրանց պատած ցավն ու ողբերգությունը, մեր հարազատների ու համերկրացիների անդառնալի կորուստները: Նշեմ, որ գաղթի ժամանակ Արաքսի այս ափ չէին հասցրել անցնել պապերս ու տատերս, հինգ հորեղբայրներս, հորաքույրներս, քեռիներ և մորաքույրեր: Գերդաստանի շուրջ 20 անդամ կորստի էին մատնվել: Նրանցից ամենակրտսերը 17-ամյա Հրանտ հորեղբայրս էր, որի անունով արդեն Ղարաքիլիսայում 1927-ին կնքել են ինձ: Երբևէ չտեսած, բայց մանկուց սրտի խորքում փայփայած ու կարոտով երազած հայրենիքը՝ Կարսի մարզի Բաշցյուղը, մանկան իմ երևակայության մեջ առայսօր այդպես էլ մնում է որպես երազի տան հեքիաթային խորհրդանիշ: Այնտեղից բերված մի ափ սուրբ հող այսօր խառնված է ծնողներիս շիրիմներին:

---

հերթական ոգեշունչ նամակում Ս. Ավետիսյանը նշում է, որ գտնվում է Բեռլինից ընդամենը 45 կմ հեռավորության վրա, և որ իրենց ստորաբաժանումն է գրավել ֆաշիստական շրջապատման մեջ գտնվող Շապրե-Սյուլ ու Ղոյ-Կրոն քաղաքները:

Ձեռնվել է 1945 թ. մարտի 4-ին Բաբինի (Պիրիցայի կամ Պիժիցի շրջան, Լեհաստան) համար մղված թեժ մարտում: Թաղված է Լեհաստանի Ստարգարդ-Շչեցինսկ քաղաքի ինտերնացիոնալ զերեզմանատանը:

Պատմությունը հավերժացրել է Ս. Ավետիսյանի հիշատակը: Ֆաշիստական զորքերին Ստալինգրադում ջախջախելու 30-ամյակի նախօրեին նա հետմահու պարգևատրվեց «62-րդ բանակի վետերանին» կրծքանշանով: Իսկ 1973 թ. Կիրովականի պիոներական խորհրդի որոշմամբ քաղաքի թիվ 6 միջնակարգ դպրոցի պիոներական դրուժնային տրվեց նույն դպրոցի շրջանավարտ Ս. Ավետիսյանի անունը:

Այս մասին մանրամասն տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), ֆ. 1712 (Ն. Ավետիսյանի անձնական ֆոնդ), ց. 1, գ. 72, 363, 367, 369: Советская Армения в годы Великой Отечественной войны (1941 – 1945). Сборник документов и материалов. - Е.: Изд-во Академии Наук Армянской ССР. - 1975. - сс: 591-592. Միրզոյան Ս. Ստալինգրադայան հրացույր: Չուշեր. Ե. - 1968: Ամիրբեկյան Վ. Անրուն գիշերներ. - Ե.: Հայպետհրատ. - 1949:

Հիմա ձեզ եմ հարցնում. ինչպե՞ս կարող էր այդ ամենը դեր չխաղալ իմ մասնագիտական ընտրության հարցում<sup>2</sup>:

1944 թ., ավարտելով ծննդավայրի Սո. Շահումյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցը, Հ. Ավետիսյանն ընդունվում է Երևանի Վ.Ս. Մոլոտովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Մասնագիտական դասընթացն ավարտում է 1949 թ. ստանալով պատմաբանի որակավորում: 1941 թ. համալրում է ՀԼԿԵՄ շարքերը, իսկ 1950 թ. հունիսին դառնում ՄՍԿԿ անդամ:

1949 թ. հունվար – 1952 թ. նոյեմբերին Հ. Ավետիսյանն աշխատում է Հայաստանի կոմերիտական, իսկ 1952 թ. նոյեմբեր – 1954 թ. դեկտեմբերին կուսակցական ղեկավար կառույցներում. եղել է Հայաստանի լենինյան կոմերիտական երիտասարդական միության ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմի պրոպագանդայի բաժնի հրահանգիչ (1949 թ.), Ս. Կիրովի անվան գործարանի կոմերիտական կազմակերպության քարտուղար (1949 – 1950 թթ.), ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմի քարտուղար՝ պրոպագանդայի և ազիտացիայի գծով (1950 - 1951 և 1952 թթ.), Ստալինյան շրջանային կոմիտեի քարտուղար (1951 – 1952 թթ.), Հայաստանի կոմունիստական կուսակցության (ՀԿԿ) կենտրոնական կոմիտեի (ԿԿ) Երևանի քաղկոմի պրոպագանդայի բաժնի հրահանգիչ (1952 – 1954 թթ.), ապա՝ գիտության և կուլտուրայի բաժնի հրահանգիչ (1954 թ.):

1954-ից Հ. Ավետիսյանի հիմնական աշխատավայրը դառնում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան: 1954 – 1979 թթ. տարբեր պաշտոններ է վարել ԳԱ նախագահության համակարգում՝

---

<sup>2</sup> Կարսն այդպես էլ մնում է որպես երազի տան հեքիաթային խորհրդանիշ / Հարցազրույցը վարեց Էդվարդ Շահիրյանը // Հայաստան. - 2002. - թ. 8. - 22 մարտի. - էջ 2. - նկ. - (Հոբելյան):

կադրերի և ասպիրանտուրայի բաժնի պետ (1954 - 1957 թթ.), գիտնական-քարտուղար (1957 -1971 թթ.), գլխավոր գիտնական-քարտուղարի տեղակալ (1971 - 1979 թթ.)՝ իրեն դրսևորելով որպես գիտության հմուտ կազմակերպիչ: Նշված պաշտոններում իր պարտականությունները Հ. Ավետիսյանը համատեղել է ՀՍՍՀ ԳԱ գիտահետազոտական հիմնարկների և բուհերի գիտական գործունեության կոորդինացիոն խորհրդի նախագահի տեղակալի (1964 - 1967 թթ.), գիտական կադրերի պատրաստման խորհրդի նախագահի (1967 - 1971 թթ.), իսկ մինչև 1979 թ.՝ նաև ցուցահանդեսային խորհրդի նախագահի պարտականությունների հետ:

Հ. Ավետիսյանը ակտիվորեն կատարել է նաև հասարակական աշխատանք կոմերիտական ու կուսակցական ընտրովի մարմիններում: 1950 - 1980-ական թթ. եղել է ՀԼԿԵՄ ԿԿ պլենումի անդամ (1950 - 1953 թթ.), ՀԿԿ Երևանի քաղաքային, Կիրովյան (հետագայում՝ Մպանդարյան) և 26 կոմիսարների շրջկոմների, դրանց բյուրոների անդամ (1956 - 1978 թթ.), ՀԿԿ Երևանի քաղաքային գաղափարախոսական հանձնաժողովի պլենումի անդամ (1968 - 1986 թթ.), ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային սովետի դեպուտատ և նրա գործկոմի անդամ, ՀՍՍՀ ժողովրդական վերահսկողության կոմիտեի անդամ (1961 - 1986 թթ.): 1955 թ. սկսած՝ նա երկար տարիներ բազմակի ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ նախագահության կուսկազմակերպության առաջին քարտուղար:

Այդ տարիներին Հ. Ավետիսյանն իր բազմակողմանի գիտակազմակերպչական գործունեությունը հաջողությամբ համատեղում է գիտահետազոտական աշխատանքի հետ: 1960 թ. հունիսի 30-ին Երևանի պետական համալսարանում պաշտպանում

է թեկնածուական աստենախոսություն «Հայաստանի կոմերիտ-միությունը սոցիալիստական ինդուստրացման համար պայքարում (1926 – 1932 թթ.)» (ռուսերեն)<sup>3</sup> թեմայով, իսկ 1966 թ. սեպտեմբերի վերջին ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի մասնաճյուղում՝ Վրաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին առընթեր Կուսակցության պատմության ինստիտուտում պաշտպանում է դոկտորական աստենախոսություն «Աւերկովկասի կոմերիտմիությունը խորհրդային իշխանության հաղթանակի և Կոմունիստական կուսակցության քաղաքականության իրագործման համար պայքարում սոցիալիստական շինարարության առաջին տարիներին (1917 – 1925)» (ռուսերեն)<sup>4</sup> թեմայով<sup>5</sup>: 1964 թ. Հ. Ավետիսյանը պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման աստենախոսություն է պաշտպանում նաև Մոսկվայում<sup>6</sup>: 1969 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

<sup>3</sup> St u Аветисян Г.А. Комсомол Армении в борьбе за социалистическую индустриализацию (1926 – 1932 гг.) / Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. - Е.- 1960.- 36 с. St u ՀԱԱ, ֆ. 1712, ց. 1, գ. 31:

<sup>4</sup> St u Аветисян Г.А. Комсомол Закавказья в борьбе за победу Советской власти и осуществление политики Коммунистической партии в первые годы социалистического строительства (1917 – 1925) / Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. - Тбилиси. - 1966.- 64 с. St u ՀԱԱ, ֆ. 1712, ց. 1, գ. 31:

<sup>5</sup> ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կադրերի բաժնի արխիվում պահպանվող անձնական գործում ակադեմիկոս փաստաթղթերի համաձայն, Հ. Ավետիսյանին պատմական գիտությունների թեկնածուի և դոկտորի գիտական աստիճան շնորհելու վերաբերյալ դիմումները տրվել են ՍՄԿԿ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից համապատասխանաբար 1961 թ. հունվարի 18-ին և 1967 թ. հունիսի 27-ին:

<sup>6</sup> St u Аветисян Г.А. Ленинские идеи о Советах и борьба КПСС за их претворение в жизнь / Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. - М.: Областной педагогический институт им. Н.К. Крупской. - 1964.- 21 с.

Աշխատանքային բուռն գործունեությանը զուգահեռ Հ. Ավետիսյանն ընտանիք է կազմել Ռոզա Գրիգորյանի հետ, ունեցել երեք երեխա՝ Սուրենը, Կարինեն և Գայանեն: Ընտանիքի անդամներն ու հարազատները նրան հիշում են՝ իբրև հոգատար զավակ, եղբայր, ամուսին ու հայր: Իսկ Հ. Ավետիսյանն առանձնահատուկ ակնածանքով էր հիշում 1945 թվականին Մեծ Հայրենականում զոհված եղբորը՝ Սուրենին:

1979 թ. փետրվարի 23-ին Հ. Ավետիսյանը ստանձնում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը և անընդմեջ պաշտոնավարման 23 տարվա ընթացքում կատարում ծանրակշիռ աշխատանք<sup>7</sup>: Այն, որ Հ. Ավետիսյանի տնօրինության մեկնարկը խոստումնալից է եղել, վկայում է նրա ղեկավարած հիմնարկի պարզևատրումը ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, Արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի և Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի Փոխանցիկ կարմիր դրոշով՝ 1980 թ. սոցիալիստական պարտավորությունները հաջողությամբ կատարելու համար (11.02.1981):

Վերակառուցման, Արցախյան ազգային-ազատագրական շարժման, Սպիտակի աղետալի երկրաշարժի, Հայաստանի անկախության վերականգնման, ԽՍՀՄ-ի փլուզման, հանրապետության սոցիալ-տնտեսական ճգնաժամի դժվարին ժամանա-

---

<sup>7</sup> Հ. Ավետիսյանը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի յոթերորդ տնօրենն է: Պատմության ինստիտուտի առաջին տնօրենն էր ակադեմիկոս Հ. Օրբելին, որին 1944 թ. փոխարինեց Մ. Ներսիսյանը: 1947 – 1953 թթ. ինստիտուտը ղեկավարել է Աբ. Հովհաննիսյանը, 1953 – 1959 թթ.՝ Ս. Երեմյանը, 1959 – 1963 թթ.՝ Ա. Հարությունյանը, 1963 – 1979 թթ.՝ Գ. Գալոյանը: 2002 թ. ՊԻ տնօրենի պաշտոնում է Ավետիսյանին հաջորդեց և ինստիտուտի գիտական ու կազմակերպչական աշխատանքների ղեկավարումը պատվով իրականացնում է ակադեմիկոս Ա. Մելքոնյանը:

կահատվածում 2. Ավետիսյանի գործադրած անդուլ ջանքերի շնորհիվ ինստիտուտն ապրում է խաղաղ և ստեղծագործական կյանքով, համալրվում երիտասարդ կադրերով, հրատարակվում են բազմաթիվ ուսումնասիրություններ: Ինստիտուտի կուլեկտիվն ակնառու ներդրում է ունենում Հայոց պատմության դպրոցական դասագրքերի ստեղծման գործում: Պատմության ինստիտուտը նաև ամրապնդում և ընդլայնում է իր արտաքին կապերն ու համագործակցությունն այնպիսի գիտահետազոտական կենտրոնների հետ, ինչպիսին են՝ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի պատմության և Ընդհանուր պատմության ինստիտուտները, Ռուսաստանի պատմաբանների ազգային կոմիտե, ԱՄՆ Կալիֆորնիայի համալսարանի հայագիտական ամբիոնը, Վաշինգտոնի Ազգային անվտանգության արխիվը (Ջորջ Վաշինգտոն համալսարան) և Վուդրո Վիլսոնի անվան միջազգային կենտրոնը, Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը (CNRS), Հալե-Վիտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, Հունգարիայի Գիտությունների ակադեմիան, Վենետիկի Կա' Ֆոսկարի պետական համալսարանի հայագիտության ամբիոնը, Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանը: Բացի այդ, Հայկական ՄՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կուլեկտիվն անդամակցում է արաբական երկրների հետ բարեկամության և մշակութային կապի սովետական ընկերության հայկական բաժանմունքին:

2. Ավետիսյանը եղել է ինստիտուտի գիտական և գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների նախագահը, ԵՊՀ և ՀԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի «ՄՄԿԿ պատմություն»


մասնագիտության գծով դոկտորական դիսերտացիաների պաշտպանության մասնագիտացված խորհուրդների, ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի, «Լրաբեր հասարակական գիտությունների» և «Պատմա-բանասիրական հանդես» ամսագրերի, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի, «Օրենք և իրականություն» հանդեսի, Թբիլիսիում տպագրվող «Կովկասագիտություն» միջազգային ամսագրի գիտական խմբագրական խորհուրդների, Հայկական ՄՍՀ «Գիտելիք» ընկերության նախագահության, «Հայկական սովետական հանրագիտարանի» գիտահրատարակչական և ՀամԼԿԵՄ Կենտկոմին ու ՄՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիային առընթեր կոորդինացիոն խորհուրդների անդամ, Գիտությունների ակադեմիայի «Գիտելիք» ընկերության վարչության նախագահը, Հայկական ՄՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պետական մրցանակների կոմիտեի, ՀԼԿԵՄ Կենտկոմին առընթեր մրցանակների կոմիտեի անդամ: Հ. Ավետիսյանը եղել է նաև ՀՍՍՀ պատմական գիտությունների բնագավառը կոորդինացնող խորհրդի նախագահի տեղակալը, ՄՍՀՄ ԳԱ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության պատմության պրոբլեմներն ուսումնասիրող խորհրդի հայկական բաժանմունքի նախագահը և միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման պատմության պրոբլեմներն ուսումնասիրող խորհրդի հայկական բաժանմունքի նախագահի տեղակալը, Խորհրդա-լեհական բարեկամության հայկական բաժանմունքի նախագահը:

Միաժամանակ, շարունակում էր կուսակցական աշխատանքը որպես Պատմության ինստիտուտի կուսակցական բյուրոյի անդամ: Իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո, իր քաղաքացիական համոզմունքներին ու դիրքորոշմանը հավա-

տարիմ, անդամագրվում է ՀՀ «Ռուսաստանի բարեկամներ» հասարակական կազմակերպությանը:

Հանրապետական ու համամիութենական պաշտոնական պատվիրակությունների և հատուկ տուրիստական խմբերի կազմում 1964 – 2000 թթ. Հ. Ավետիսյանը գործուղումների է մեկնում ԱՄՆ, Հունգարիա, Լեհաստան, ԳՂՀ, Բուլղարիա, Ռումինիա, Շվեյցարիա, Չեխոսլովակիա, Իտալիա, Ֆրանսիա, Մարոկկո, Թուրքիա, Հունաստան, Կիպրոս, Սիրիա, Եգիպտոս, Իսպանիա, Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան: Ձեկուցումներով հանդես է գալիս Մոսկվայում, Թբիլիսիում, Կրայովում, Սոֆիայում, Թուրինում, Վարշավայում, Բուխարեստում, Բուդապեշտում, Վաշինգտոնում անցկացված միութենական և միջազգային գիտական կոնֆերանսներում, նստաշրջաններում, ինչպես նաև գիտական հետազոտություններ կատարում տեղի արխիվներում: Միջազգային գիտական հարթակներում Հ. Ավետիսյանի զեկուցումներից արժանահիշատակ են 1982 թ. հունիսին Կրայովում անցկացված խորհրդային ու ռումին պատմաբանների IX գիտական կոնֆերանսում ներկայացրածը՝ «Պատմական ժառանգությունը և գիտության ու մշակույթի զարգացումը Մովետական Հայաստանում» (ռուսերեն) թեմայով, 1986 թ. սեպտեմբերին Վաշինգտոնում տեղի ունեցած խորհրդային ու ամերիկյան պատմաբանների կոլոքվիումում կարդացածը՝ «Խորհրդային հասարակության կառուցվածքը և ազգային հարաբերությունները ԽՍՀՄ-ում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին» (ռուսերեն) և 1998 թ. մայիսին Թբիլիսիի պետական համալսարանում կարդացած զեկուցումը «Կովկասյան հանրապետությունների կոնֆեդերատիվ միավորման գաղափարը 1918 – 1921 թթ.» (ռուսերեն) թեմայով:

1983 50111



1986 թ. Հ. Ավետիսյանն ընտրվում է ՀՍՄՀ ԳԱ թղթակից անդամ իսկ 1996 թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս: Նշենք, որ այդ գիտական կոչման համար ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆ. Հ. Ավետիսյանի թեկնածությունն առաջադրվել էր 1996 թ. փետրվարի 6-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով նրա վաստակը հայրենական պատմագիտության զարգացման բնագավառում: Գիտխորհրդի նիստին մասնակցող 18 անդամները փակ (զաղտնի) քվեարկության արդյունքում միաձայն քվեարկել էին Հ. Ավետիսյանի օգտին: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ընտրվելու համար Հ. Ավետիսյանի թեկնածությունը պաշտպանել էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական խորհուրդը՝ հաշվի առնելով թե՛ նրա ներդրումը հայոց պատմության նորագույն շրջանի մի շարք հանգուցային հիմնահարցերի վերհանման ու գիտական անաչառ լուսաբանման գործում, թե՛ նրա նպաստը մանկավարժ-պատմաբանների պատրաստման մեջ: Սակայն հարցի հետագա ընթացքն աննախադեպ էր, առանձնահատուկ: Փետրվարի 16-ին ՀՀ ԳԱԱ Նախագահության ու իսկական անդամների (ակադեմիկոսների) ընդհանուր ժողովի որոշմամբ ակադեմիկոսների և թղթակից անդամների անդամության երկաստիճան համակարգից անցում է կատարվում միաստիճան համակարգի: Հ. Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ մյուս թղթակից անդամների թվում առանց ընտրության դառնում է ԳԱԱ ակադեմիկոս:

2002-ին Հ. Ավետիսյանն ընտրվում է ԳԱԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ 2004 թ. ապրիլի 1-ից ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Մարգարյանի հրամանով նշանակվում ԳԱԱ պատմության ինստիտուտի պատվա-

վոր տնօրեն՝ ազատվելով ակադեմիկոս-քարտուղարի պարտականություններից:

2. Ավետիսյանը օժտված էր բնատուր հմայքով և ուներ մարդկանց հետ հեշտորեն հաղորդակցվելու այնպիսի կարողություն, որի հաջողությանը բնավ խոչընդոտ չէին ոչ լեզվական, ոչ տարիքային և ոչ էլ մասնագիտական տարբերությունները: Նա կարողանում էր ապահովել փոխադարձ հարգանքի, համախմբվածության և արդյունավետ աշխատանքի մթնոլորտ հիմնարկում: Իսկ Հ. Ավետիսյանի և նրա ընտանեկան օջախի հյուրընկալության շնորհիվ բազմաթիվ օտարերկրացիներ ճանաչել ու սիրել են հայ մարդու տեսակը, Երևանը, Հայաստանը<sup>6</sup>:

Վարչական և գիտահետազոտական աշխատանքին զուգահեռ Հ. Ավետիսյանն իր մասնագիտական փորձն ու հմտությունները փոխանցում էր Հայկական ՄՍՀ լուսավորության մինիստրության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի կադրերին՝ նպաստելով մատաղ սերնդի ազգային կրթության ու դաստիարակության ընթացիկ խնդիրների լուծմանը, կրթության բովանդակության, ուսուցման և դաստիարակության ձևերի, մեթոդների ու միջոցների կատարելագործմանը:

Հ. Ավետիսյանը տասնյակ տարիներ համատեղությամբ կատարել է մանկավարժական եռանդուն աշխատանք Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և հանրապետության առաջին մասնավոր բուհերից մեկում՝ «Հրաչյա Աճառյան» համալսարանում՝ ուսանողներին հաղորդակից դարձնելով Պատմության ակադեմիական ինստիտուտի գիտական գործունեությանը և ձեռքբերումներին հայոց պատմության նոր ու նորագույն ժամանա-

<sup>6</sup> Այս մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1712, ց. 1, գ. 71, 374, թ. 1:

կաշրջանների հիմնախնդիրների ուսումնասիրման ուղղությամբ ձեռքբերումներին:

2. Ավետիսյանն իր ակտիվ մասնակցությունն է բերել նաև հանրապետության երիտասարդ պատմաբանների կայացման ու պատմաբան կադրերի սերնդափոխության ապահովման գործին՝ ղեկավարելով ասպիրանտների ու հայցորդների ընթացքը դեպի հասուն գիտություն, կարելվույն չափ անգամ հոգալով նրանց կենցուցյան, աշխատանքային ու կենցաղային խնդիրների մասին: Ինքս էլ 2. Ավետիսյանի ասպիրանտներից եմ եղել, ով վաստակաշատ պատմաբանին համարում է իր ուսուցիչը, բարձր գնահատում նրա հոգատար վերաբերմունքն ուսանողների, ինչպես նաև՝ հայոց պատմությունն իրենց մասնագիտությունը դարձրած, գիտության ոլորտում առաջին քայլերն անող ասպիրանտների ու հայցորդների նկատմամբ:

2. Ավետիսյանը եղել է 5 դոկտորական ատենախոսության գիտական խորհրդատու, 12 թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար, 6 դոկտորական ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս:

Ակադեմիկոս 2. Ավետիսյանը նաև ունի որոշակի ներդրում հայոց պատմության դպրոցական դասագրքերի, ինչպես նաև հանրակրթության և մասնագիտական կրթության «Շնչհանուր պատմություն» առարկայի ծրագրերի, դասագրքերի ու այլ ուսումնամեթոդական նյութերի մշակման և ստեղծման գործում: 2000 թ. մարտից ՀՀ Կրթության և գիտության նախարարության առաջարկությամբ ղեկավարել է Կրթական բարեփոխումների կենտրոնին կից գործող «Շնչհանուր պատմություն» առարկայի ուսումնամեթոդական խորհուրդը:

Գիտակազմակերպչական ու գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար Հ. Ավետիսյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով (1967 թ.), «Անձնվեր աշխատանքի համար: Ի նշանավորումն Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի» մեդալով (1970 թ.), համամիութենական «Գիտելիք» ընկերության «Ակտիվ աշխատանքի համար» կրծքանշանով: Կոմերիտիության ու երիտասարդության պատմությանը նվիրված աշխատությունների համար արժանացել է ՀամԼԿԵՄ Կենտկոմի բարձրագույն պարգևին՝ Պատվո նշանի (1968 թ.), դարձել Հայաստանի (1971 թ.) ու միութենական (1978 թ.) Լենինյան կոմերիտիության դափնեկիր: Բարձր գնահատելով Հ. Ավետիսյանի ավանդը հայաստանյան պատմագիտության զարգացման գործում՝ 1994 թվականին «Հայաստան» հիմնադրամը նրան ևս շնորհել է դափնեկրի կոչում:

Հ. Ավետիսյանը նաև պարգևատրվել է պատվոգրերով ու շնորհակալագրերով: ՀամԼԿԵՄ պատմությունն ուսումնասիրելու և քարոզելու ուղղությամբ կատարած մեծ աշխատանքի, ինչպես նաև աճող սերնդի կոմունիստական դաստիարակության գործին ակտիվ մասնակցության համար Հ. Ավետիսյանն արժանացել է ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրին (17.05.1967), համամիութենական «Գիտելիք» ընկերության շնորհակալագրին «Մոսկվայում Հայկ. ՍՍՀ գիտության Լենինյան օրերի անցկացմանն ակտիվորեն մասնակցելու և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ու ժողովուրդների բարեկամության զաղափարների քարոզչության մեջ մեծ ավանդի համար» (17.10.1969): «Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու պրոպագանդմանն ակտիվ մասնակցություն ունենալու համար» նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ «Գիտելիք» ընկերության պատվոգիրը

(24.01.1979): Իսկ երիտասարդությանը ՄՄԿԿ և սովետական ժողովրդի հեղափոխական, մարտական ու աշխատանքային ավանդույթներով դաստիարակելու ուղղությամբ բազմամյա աշխատանքի համար Հ. Ավետիսյանը պարգևատրվել է ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով (22.02.1982): 2000 թվականին ակադեմիկոսն արժանացել է ՀՀ ԳԱԱ պատվոգրին՝ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, սփյուռքահայության պատմության ուսումնասիրության բնագավառում գիտական հետազոտությունների համար: Նաև արժանահիշատակ են՝ ՀամԼԿԵՄ Կենտկոմի «ՀամԼԿԵՄ XIX համագումարի նախապատրաստմանն ու անցկացմանն ակտիվորեն մասնակցելու համար» հուշանշանը և Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միության 50-ամյակի կապակցությամբ շնորհված հոբելյանական կրծքանշանը, Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության կենտրոնական կոմիտեի հուշանշանն՝ ի պատիվ Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության 60-ամյակի, ինչպես նաև Կիրովականի Հովհաննես Թումանյանի անվան № 3 միջնակարգ դպրոցի 120-ամյա հոբելյանը կազմակերպող և անցկացնող հանձնաժողովի կողմից տրված հոբելյանական կրծքանշանը: 1997 թ. Հ. Ավետիսյանն իր 70-ամյակի առթիվ արժանացել է «Վանաձորի պատվավոր քաղաքացու» կոչման:

Հ. Ավետիսյանի գիտահետազոտական գործունեությունն ու կազմակերպչական հմտությունները բարձր են գնահատվել նաև արտերկրում: Դրա վկայությունն են նրա ընտրվելը Վենետիկի «Պո-Արաքս» (Իտալիա-Հայաստան) գիտամշակութային ընկերության պատվավոր անդամ (1990 թ.), ինչպես նաև անդամակցությունը ԽՍՀՄ պատմաբանների ազգային կոմիտեի բյուրոյին

(1991 թ.) և Փարիզի «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիային (1995 թ.):

2. Ավետիսյանը մահացել է 2004 թ. նոյեմբերի 9-ին:

Ակադեմիկոս Հ. Ավետիսյանը թողել է գիտահետազոտական մնայուն ժառանգություն՝ նվիրված XX դարասկզբի Անդրկովկասի, մասնավորապես՝ Հայաստանի կոմերիտամիության ու երիտասարդության միջազգային կոմունիստական հասարակական-քաղաքական շարժումներին և հայ ժողովրդի նորագույն պատմության բազմաշերտ հիմնահարցերին՝ հայոց ազգային բանակի ու Հայաստանի առաջին հանրապետության ծնունդին, 1920 թ. Մայիսյան ապստամբությանը, Ղարաբաղի բռնակցմանը Ադրբեջանին և այլն:

2. Ավետիսյանը գրել է 16 մենագրություն ու ձեռնարկ: Ունի շուրջ 250 հոդված և հարցազրույց՝ տպագրված հայաստանյան ու արտասահմանյան պարբերական մամուլում և ժողովածուներում: Խմբագրել է շուրջ 45 պատմագիտական աշխատություն: Համահեղինակ է հայաստանյան ու միութենական նշանակության ավելի քան 20 կոլեկտիվ աշխատության ու դասագրքերի: Ներածություն է գրել 6 աշխատության համար: Ունի նաև անավարտ մի քանի աշխատություն:

Իր աշխատություններում Հ. Ավետիսյանը գիտական շրջանառության մեջ է դրել մեծ քանակությամբ արխիվային վավերագրեր, մոռացումից փրկել ու ընթերցող լայն հասարակությանը ծանոթացրել է հայ հայրենանվեր բազմաթիվ գործիչների գործունեության մանրամասներին, լուսաբանել՝ մեր ազգային պատմության մի շարք կնճռոտ հիմնահարցեր:

2. Ավետիսյանն ակնառու ներդրում ունի Հայաստանի և Անդրկովկասի լենինյան կոմերիտամիության, երիտասարդական

հեղափոխական շարժումների պատմության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական շինարարության առանցքային հիմնախնդիրների ուսումնասիրման ասպարեզում: Այդ տեսանկյունից արժանահիշատակ են նրա «Հայաստանի կոմերիտմիությունը սոցիալիստական ինդուստրացման համար մղված պայքարում (1926 – 1932)» (1959), «Ընթացիկ խնդիրներ: Երիտասարդության Կոմիտեերի գործկոմի գլխավոր քարտուղարի կյանքի և գործունեության մասին» (1966, ռուսերեն հրատարակությունը՝ 1971), «Մայիսյան ապստամբությունը Կոմիտեերի նյութերում (1920 մայիս – 1920 սեպտեմբեր)» (1981), «Անդրկովկասի կոմերիտմիությունը Խորհրդային իշխանության հաղթանակի և ամրապնդման համար պայքարում. 1917 – 1921» (1964, ռուսերեն), «Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո» (1982, ռուսերեն), «Մեծ Հոկտեմբերը և հեղափոխական Հունգարիան» (1989, ռուսերեն) մենագրություններն ու համամիութենական նշանակություն ունեցող «Ընկեր կոմերիտմիություն: ՀամԿԵՄ-ը փաստաթղթերում» (Մոսկվա, 1970, ռուսերեն) և երկհատոր «Լենինյան կոմերիտմիության փառապանծ ուղին» (Մոսկվա, 1974, ռուսերեն) կոլեկտիվ աշխատությունները: Դրանցում Հ. Ավետիսյանը վերլուծել է պրոլետարական ինտերնացիոնալիզմի վերաբերյալ մարքսիստական ուսմունքի գործնական կիրառումը հեղափոխական երիտասարդական շարժման մեջ, արժևորել է միջազգային պրոլետարական պայքարում երիտասարդության տեղի ու դերի մասին տեսական սկզբունքները: Միջազգային կոմունիստական շարժման ընդհանուր շղթայում Անդրկովկասի, մասնավորապես՝ Հայաստանի հեղափոխական երիտասարդության գործունեությունը, Հ. Ավետիսյանը վերլուծության է ենթարկել հարուստ աղբյուրագիտական հենքի վրա՝

ներկայացնելով այն որպես համառուսաստանյան և միջազգային պրոլետարական շարժման բաղկացուցիչ մաս, ընդգծելով դրա նշանակությունը Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատման ու ամրապնդման համար պայքարում: Հ. Ավետիսյանին հաջողվել է նոր տեսանկյունից Կոմունիստական ինտերնացիոնալի նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա ներկայացնել 1920 թ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում՝ վերհանելով միջազգային հեղափոխական շարժման արձագանքը դրա նկատմամբ: Նա երկու աշխատություն է նվիրել խորհրդային և միջազգային կոմերիտական շարժման հայտնի դեմքերից մեկի՝ Բաֆֆի Խիտարովի կյանքի ու գործունեության համակողմանի լուսաբանմանը: Կարևորել է նաև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության միջազգային նշանակությունը, Խորհրդային Ռուսաստանի փորձի կիրառումն այլ երկրներում, մասնավորապես Հունգարիայում:

Հ. Ավետիսյանի «Վ.Բ. Լենինը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը երիտասարդական հեղափոխական շարժման մեջ (1894 – 1920 թթ.)» (1979, ռուսերեն) ու «Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո» (1982, ռուսերեն) մենագրություններում այնպիսի հիմնավորվածությամբ է ներկայացված Վ.Բ. Լենինի տեսական ու պրակտիկ բազմակողմանի գործունեությունը երիտասարդությանը մարքսիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու, նրան հեղափոխական շարժման մեջ ընդգրկելու ուղղությամբ, որ խորհրդային պատմագրության մեջ դրանք գնահատվել են՝ որպես հարցադրումների նորությամբ ու կյուրի հարստությամբ աչքի ընկնող հիմնարար աշխատություններ:

Թվարկված աշխատությունները այքշահեկանորեն տարբերվում են քննարկվող հիմնախնդիրները ժամանակի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի լայն ֆոնին ներկայացնելու՝ հեղինակի հետևողականությամբ, բոլշևիկյան հեղափոխության նախօրեին ու դրա հաղթանակի համար մղվող պայքարի ընթացքում երկրամասի դասակարգային ուժերի հարաբերակցության համակողմանի վերլուծությամբ: Պատահական չէ, որ ժամանակին դրանք արժանացել են խորհրդային գիտական, կուսակցական ու կոմերիտական հասարակության բարձր գնահատականին՝ հեղինակին բերելով ներկայացված պատմագիտական հիմնախնդիրներն ուսումնասիրող առաջատար մասնագետի համբավ խորհրդային Միությունում:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման ծավալումը և Հայաստանի անկախության վերականգնման գործընթացը, արխիվների բացումը, «հրապարակման ենթակա չէ» հրամայականի վերացումն ու հայոց անկախ պետականության պայմաններում հայ պատմագրության առջև դրված նոր խնդիրները վճռորոշ ազդեցություն ունեցան անվանի պատմաբանի գիտական որոնումների վրա: Արմատներով կարսեցի, բնագաղթի տառապանքները երկու անգամ ապրած գերդաստանի ժառանգ Հ. Ավետիսյանը կենտրոնացավ հայոց պատմության առավել կնճռոտ հիմնահարցերի ուսումնասիրման և դրանց վերաբերյալ արխիվներում հայտնաբերած հարուստ նյութերը գիտական շրջանառության մեջ դնելու վրա: 1992 թ. հունվարին, երբ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ինը բաժինների փոխարեն ձևավորվեցին թեմատիկ խմբեր, Հ. Ավետիսյանի ղեկավարությամբ ստեղծվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքական-հասարակական կյանքը և տարածաշրջանային հարաբերություններ»

րը 1918 – 1920 թթ.» թեմատիկ խումբը: Այն մեկն էր ինստիտուտում ձևավորված 14 խմբերից, որոնց թիվը երկու տարում հասավ 17-ի: Առաջադրված թեման այնքան արդիական էր, որ դրա շրջանակներում Հ. Ավետիսյանի՝ ազգային հիմնախնդիրներին նվիրված գիտական ուսումնասիրությունները հրատարակվեցին և՛ Հայաստանում, և՛ արտասահմանում՝ Բեյրութում, Բուդապեշտում, Մոսկվայում, Թբիլիսիում, Լոնդոնում, Բեռլինում, Աթենքում ու այլուր: «Եթե առաջներում ֆինանսական հնարավորությունը կար, բայց իշխում էր սահմանափակումը, ապա այժմ հակառակն է: Չլինե՞ր այդ իրադրությունը, գիտական գործընթացը առավել արդյունավետ բնույթ կկրեր»<sup>9</sup>, - շուկայական հարաբերությունների պայմաններում մտավորականներին կաշկանդող ֆինանսական դժվարությունների մասին նշել է Հ. Ավետիսյանը:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր իրադրության պայմաններում անխուսափելի էր նաև հայոց պատմության կարևոր հիմնահարցերի նկատմամբ գիտական մտեցումների վերաարժևորումը, պատմական նոր փաստերի ու պատմագիտական տեսակետների ընդգրկումը պատմագիտական հիմնարար աշխատություններում, մասնավորապես՝ այն աշխատություններում, որոնք նախատեսված են օտարալեզու ընթերցողի համար: Այս իմաստով արժանահիշատակ է «Հայ ժողովրդի պատմություն» ռուսերեն քառահատոր աշխատությունը, որի շարադրման աշխատանքները գլխավորում էր ակադեմիկոս Հ. Ավետիսյանը: Ցավոք, այդ նախաձեռնությունն իր ավարտին չհասավ: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ «Հայ ժողովրդի պատմութ-

<sup>9</sup> Կարսն այդպես էլ մնում է որպես երազի տան հեքիաթային խորհրդանիշ / Հարցազրույցը վարեց Էդվարդ Շահիրյանը // Հայաստան.- 2002.- թ. 8.- 22 մարտի.- էջ 2.- նկ.- (Շոբեյան):

յուն» ռուսերեն հիմնարար աշխատության ստեղծման ուղղությամբ աշխատանքները ձգձգվել են և, ի վերջո, ընդհատվել:

Այդուհանդերձ, գիտնականի անխոնջ միտքը շարունակում էր պրպտումները: 1994 թ., երբ Հայաստանի նորանկախ հանրապետությունը զգուհում էր քաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ, Հ. Ավետիսյանը ռուսերեն լեզվով հրատարակեց «Բրեստ-Լիտովսկ. ինչպես բռնակցվեցին Թուրքիային Կարսը, Արդահանը, Բաթումը» ուշագրավ աշխատությունը: Հեղինակը արխիվային նորահայտ փաստաթղթերի հեկքի վրա բնութագրում է ոչ միայն ժամանակի քաղաքական իրադարձությունները, այլև Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքն ու արդյունքները: Հիմնավորում է, որ պատերազմում պարտված Օսմանյան կայսրությունը, օգտագործելով միջազգային նպաստավոր պայմանները, շարունակելով ռազմաքաղաքական գործակցությունը Գերմանիայի հետ, կարողանում է Ռուսաստանին թելադրել իր պահանջները: Իսկ ռուսական դիվանագիտությունը, տարված համաշխարհային հեղափոխության պատրանքներով, հեշտությամբ Օսմանյան կայսրությանն է զիջում հայկական տարածքները: Մենագրության մեջ առաջին անգամ հանգամանորեն քննարկվում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հայ ժողովրդին պարտադրված ծանր կացության խնդիրները:

Սա պատմագիտական միանգամայն նոր մոտեցում էր Բրեստ-Լիտովսկի բանակցություններին և պայմանագրին, քանի որ խորհրդային պատմագրության մեջ կարևորվել էր լոկ այդ իրադարձություններին տրվող քաղաքական գնահատականը, իսկ բանակցություններում քննարկված ազգային-տարածքային մի շարք խնդիրներ, այդ թվում՝ արևմտահայկականը, շրջանցվել էին:

Այս աշխատության մեջ ձևակերպված հիմնադրություները Հ. Ավետիսյանը զարգացնում և ամփոփում է «Հայկական հարցը 1918 թվականին» (1997) ծավալուն մենագրության մեջ: Դրանում Հայկական հարցը քննվում է ոչ միայն Բրեստ-Լիտովսկի, այլև Տրապիզոնի ու Բաթումի բանակցությունների համատեքստում, ներկայացվում է Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի ու Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների գործունեությունը Բեռլինում, Կոստանդնուպոլսում, Վիեննայում և այդ հետևախորքի վրա գնահատվում է Խորհրդային Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի կառավարությունների դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ: Աշխատության մեջ օգտագործված են Երևանի, Մոսկվայի, Վիեննայի և Բուդապեշտի արխիվների նորահայտ ու առաջին անգամ հեղինակի կողմից շրջանառության մեջ դրված մեծ թվով վավերագրեր: Դրանցում կենտրոնականը Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի Բրեստի հաշտության բանակցությունների սղագրություններն են, ռուսական և թուրքական պատվիրակությունների սղագրական արձանագրությունները, Հայաստանին և Հայկական հարցին վերաբերող վավերագրերը:

Հ. Ավետիսյանը շեշտում է, որ խորհրդային կառավարության ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքներից բխող մտտեցումը կարող էր առարկայական ուժ ստանալ միայն միջազգային իրավունքի պաշտպանության դեպքում: Սակայն Թուրքիան ժողովուրդների ազգային ինքնորոշման հարցը դիտում էր որպես իր պետության ներքին գործ՝ ժխտելով ազգային հարցի գոյությունը ընդհանրապես: Հետևաբար, բոլոր ճնշված ժողովուրդների թվում հայ ժողովրդի ինքնորոշման հնարավորությունները ևս պետք է ապահովվեին նախքան Բրեստ-Լիտովսկի

հաշտության բանակցությունների ավարտը: Հակառակ դեպքում հաշտության նախնական պայմանները, գորքերի դուրսբերումը և մասնակի զորացրումը սպառնում էին ոչ միայն ի չիք դարձնել հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքն, այլև՝ վերջնական կործանման հասցնել նրան:

2. Ավետիսյանը հիմնավորում է, որ Ռուսաստանից Արդահանի, Կարսի և Բաթումի անջատման թուրքական պահանջն ինքնորոշման պատրվակով և դրա ընդունումը խորհրդային կառավարության կողմից ոչ այլ ինչ էին, քան Կովկասյան ճակատում հաղթանակի հասած Ռուսաստանի կապիտուլյացիա գերմանական իմպերիալիզմի ու թուրքական օսմանիզմի առաջ: Դրանով հայ ժողովուրդը անօգնական կանգնում էր թուրքական բիրտ ուժի դեմ ճակատ առ ճակատ, կորցնում իր պապենական հողերը: Դրանում ակադեմիկոսը տեսնում է 1914 թ. օգոստոսի 2-ին Կոստանդնուպոլսում կնքված գերմանա-թուրքական դաշինքի ուժի գործադրումը, այսինքն՝ թուրքերի նվաճողական պլանների պաշտպանության, Օսմանյան կայսրության «արևելյան սահմանների շտկման» և Ռուսաստանում բնակվող մուսուլմանական տարրերի հետ «անմիջական շփման» հարցերում աջակցության վերաբերյալ գերմանացիների խոստման կատարումը:

3. Ավետիսյանի գնահատմամբ, Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով ի չիք էր դառնում Ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի իրականացումը: Ժխտվում էր նաև «Հաշտության մասին» հրովարտակով հռչակված «հաշտություն առանց հողագրավումների և ռազմատուգանքների» սկզբունքը: Եթե Խորհրդային Ռուսաստանի կողմից արդարության այսօրինակ ընկալումը քաղաքական իմաստով կապիտուլյացիա էր թուրքական նվաճողական նկրտումների

առաջ, ապա ռազմական տեսակետից դա իսկական ստորացում էր Ռուսաստանի համար, իսկ իրավական տեսանկյունից՝ միջազգային իրավունքի ռոտնահարում, քանի որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրման պահին Կովկասյան խորհուրդները չէին ընդունել Ժողկոմխորհի իշխանությունը:

Ներկայացնելով Հայկական հարցը Տրապիզոնի և Բաթումի բանակցություններում՝ Ն. Ավետիսյանը բացահայտում է թուրքական դիվանագիտության աստիճանական փոփոխությունը թե՛ Հայկական հարցում, թե՛ Թուրքիայի կողմից Անդրկովկասի անկախության ճանաչման ու Թուրքիա-Անդրկովկասյան դաշնային հանրապետություն բանակցությունների օրակարգի հարցերում: Հեղինակը թուրքական գործելակերպի մեջ տեսնում է համաթուրքական նվաճողական նպատակներն իրագործելու տրամաբանական հետևողականություն, որով էլ բացատրում ու հիմնավորում է թուրքական պատվիրակության կողմից Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը նույնիսկ թուրքական պետության սահմաններում անզիջում կերպով մերժելը, անթույլատրելի ու «իրենց ներքին գործը» համարելը, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, անկախ հռչակելու և Տրապիզոնի բանակցություններում այն Թուրքիայի ու Ռուսաստանի միջև բուֆերի վերածելու խնդրի լուծմանն անցնելը:

Անդրադառնալով Հայկական հարցի տեսանկյունից կարևոր 1918 թ. Բաթումի թուրք-անդրկովկասյան բանակցություններում թուրք դիվանագետների կողմից հնչեցված և Օսմանյան կայսրության ու Հայաստանի նորահռչակ հանրապետության միջև հունիսի 4-ին կնքված հաշտության պայմանագրում ձևակերպված պայմաններին՝ Ն. Ավետիսյանը հիմնավորում է, որ Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման, նրա

հետ «բարեկամության, հավերժ խաղաղության» վերաբերյալ թուրքական պատվիրակության ներկայացրած ծրագիրը հայազինջ քաղաքակնության ևս մեկ դրսևորում էր, որով երիտթուրքական կառավարությունը, ռազմաքաղաքական նոր իրադրությանը համապատասխան, լուծում էր իր համար կենսական ներքին ու արտաքին խնդիրներ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայկական հարցի վերաբերյալ իր հիմնական դրույթները, անհրաժեշտ շեշտադրումներով, պատմաբանն արտացոլել է «Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս» (1998) աշխատությունում: Այն նվիրված է Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի 1918 թ. մայիսյան հերոսամարտերին, հայոց ազգային միասնությանը, որոնք ստիպեցին թուրքական բանակին ու կառավարությանը ճանաչել Հայաստանը, նրա ազգային անկախությունը և Հայաստանի դեմոկրատական Հանրապետությունը: Պատմաբանը հիմնավորում է, որ հայկական անկախ պետականությունը վերականգնվեց ոչ թե օտարի հոգածությամբ, այլ՝ հայոց բանակի ու հայ ժողովրդի միասնական կամքով:

Փաստական վիթխարի նյութը Հ. Ավետիսյանին հնարավորություն է ընձեռել հայ ազգային շահերի տեսանկյունից վերլուծել Խորհրդային Ռուսաստանի և Օսմանյան կայսրության փոխհարաբերությունները, բացահայտել դիվանագիտական հնարքների թուրքական զինանոցը, ներկայացնել հաշտության բանակցությունների տարբեր փուլերում խորհրդային և թուրքական պատվիրակությունների կողմից Հայկական հարցի վերաբերյալ հնչեցված հարցադրումները, վերհանել թե՛ գերմանական դիվանագիտական աջակցությունը թուրքական զավթողական նկրտումներին և թե՛ խորհրդային կառավարության զիջումների

պարտվողական քաղաքականությունը, ներկայացնել 1918 թ. գարնանը Բեռլինում Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության գործունեության նպատակները, առանձնահատկությունները և ուղղությունները: Հ. Ավետիսյանի ուսումնասիրություններում բացահայտվում են քաղաքական այն բոլոր իրողությունները, որոնց հետևանքը դարձան հետագա տարիներին Հայկական հարցի լուծման վայրիվերումները:

Նշված հիմնախնդիրները Հ. Ավետիսյանը ներկայացրել է նաև հանրապետական ու արտասահմանյան գիտաժողովներում կարդացած զեկուցումներում և գիտական պարբերականներում հայերենով, ռուսերենով, անգլերենով ու հունգարերենով հրատարակած ծավալուն ու հետաքրքիր հոդվածներում:

Զարգացնելով իր հիմնադրույթները՝ ակադեմիկոսը նաև հիմնավորել է, որ 1918 – 1920 թթ. Կովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիայի գաղափարը ոչ այլ ինչ էր, քան համաթրքության նկրտումների նոր դիվանագիտական, դրսևորումը Անդրկովկասում: Հ. Ավետիսյանը վերհանել է այդ գաղափարի և Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան նախագծի հակահայկական էության ընդհանրությունը: Հայկական հարցի ընթացքի համար վտանգավոր համարելով ինչպես 1920 – 1921 թթ., այնպես էլ 1945 թ. Պոտսդամի խորհրդաժողովում ռուս-թուրքական ռազմաքաղաքական մերձեցման ազդեցությունը՝ նա, իրավացիորեն, նույն միտումն է նկատում նաև 1991 թ. մարտի 16-ին Մոսկվայում տեղի ունեցած Մ. Գորբաչով – Թ. Օզալ հանդիպման արդյունքներում<sup>10</sup>:

<sup>10</sup> Տե՛ս Ավետիսյան Հ. Հայկական հարցը 1918 թվականին.- Ե.: Բարձրագույն դպրոց.- 1997.- էջ 340-358:

Պատմաբան Հ. Ավետիսյանի հետաքրքրությունների շրջանակը ներառում էր նաև Ռուսական կայսրության բանակում ծառայած հայազգի Բարձրաստիճան սպաների կյանքի ու գործունեության, Հայաստանի առաջին հանրապետության բանակի ձևավորման ու կայացման հիմնախնդիրները: Կյանքի վերջին տարիներին ակադեմիկոսն այդ ուղղությամբ գիտական պրպտումներ էր կատարում Հայաստանի ազգային արխիվում, ՌԴ պետական արխիվում (ք. Մոսկվա), Ռուսաստանի պետական պատմական արխիվում (ք. Մանկոտ-Պետերբուրգ), ՌԴ պաշտպանության նախարարության Կենտրոնական արխիվներում (կենտրոնը՝ ք. Պոդոլսկ), հանգամանորեն ուսումնասիրում համապատասխան գրականություն ու մամուլի հրապարակումները: Ուսումնասիրության արդյունքը դարձավ «Հայազգի գեներալները Ռուսական կայսրությունում» (2007) ռուսերեն աշխատությունը: Հ. Ավետիսյանի կյանքի վերջին այդ ավարտուն մենագրությունը հրատարակվեց ակադեմիկոսի 80-ամյակի առթիվ որպես հարգանքի տուրք անվանի գիտնականի և քաղաքացու հիշատակին: Այս աշխատության մեջ լուսաբանվում է XVIII դ. վերջից մինչև Առաջին աշխարհամարտի տարիներն ընդգրկող ժամանակահատվածում Ռուսական կայսրության կառավարման համակարգում ծառայած և տարբեր արշավանքների ու ռազմական գործողությունների մասնակցած 140 հայազգի գեներալների կյանքի և գործունեության հակիրճ պատմությունը: Ակադեմիկոսը նշում է, որ 150 տարվա ընթացքում Ռուսական կայսրության բնակչության ընդամենը 0,96 %-ը կազմող հայերը ռուսական բանակին տվել են 155 գեներալ<sup>11</sup>:

<sup>11</sup> Stet' u Avetisyan G. Generaly-armyane v Rossiyskoy imperii.- E.: Iy-t Istorii NAn RA.- 2007.- cc. 7-8.

Հ. Ավետիսյանի աշխատությունները հիմնարար ներդրում են հայ պատմագիտության մեջ և ուղենշային նշանակություն ունեն հայոց նոր ու նորագույն պատմության հիմնախնդիրները հետազոտող մասնագետների համար: Ակադեմիկոսը նրանց կոչ է անում չմոռանալ, «որ հայ ժողովրդի պատմությունը, նրա հերոսական ու ողբերգական էջերը մերն են: Եվ որքանով մենք ունենք մեկ պատմություն, հետևաբար դրա շուրջ արտահայտվելիս պետք է մի կողմ թողնել «մեր» կամ «նրանց» արտահայտությունները: Մեր պատմաբանները, որտեղ էլ բնակվելիս լինեն՝ Հայաստանում, թե արտասահմանում, իրենց առջև պետք է մեկ նպատակ դնեն՝ ճշմարտացի վերարտադրել պատմությունը, չնահանջել պատմական իրողությունից»<sup>12</sup>:

---

<sup>12</sup> Կարսն այդպես էլ մնում է որպես երազի տան հեքիաթային խորհրդանիշ / Հարցազրույցը վարեց Էդվարդ Շահիրյանը // Հայաստան.- 2002.- թ. 8.- 22 մարտի.- էջ 2.- նկ.- (Հոբելյան):

## ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՑՈՒԹԵՐ Հ ԱՎԵՏԻՍՑԱՆԻ ՎՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Торсуев Ю.В. Архимедов рычаг воспитания. [О первой всесоюзной научно-теоретической конференции “Социализм и молодежь” (Москва, 16 – 18 мая, 1967), на которой Г. Аветисян выступил с докладом “Развитие молодежного движения и возникновение Комсомола Закавказья (1917 – 1919 гг.)”] // Комсомольская правда.- М.- 1967.- № 114.- 17 мая.- с. 1.
2. Кукушкин Ю.С. Проблемы изучения истории создания Союза ССР. (Историки советских республик – навстречу 50-летнему юбилею образования СССР) // История СССР.- М.- 1972.- № 6.- сс. 11-21, 22-41.
3. Ավետիսյան Հրանտ: // Ստեփանյան Գ. Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ) / Երեք հատորով / Հ. Ա. (Ա.-Թ).- Ե.: Հայաստան.- 1973.- էջ 132:
4. Ավետիսյան Հրանտ Ալեքսանի: // Հայկական սովետական հանրագիտարան / Հատոր 1.- Ե.- 1974.- էջ 613:
5. Grâce à l'association France-U.R.S.S.: Une délégation d'union soviétique envisite dans notre département. [Article sur les réunions de la délégation soviétique arrivant en France] // La dépêche du Midi.- Aveyron.- 1978.- 11 avril.
6. France-U.R.S.S. accueille en Aveyron un groupe de savants soviétiques. [Article sur les réunions de la délégation soviétique arrivant en France] // La dépêche du Midi.- Aveyron.- 1978.- 12 avril.

